'ի վերայ Դանձակեցի Յովհաննէս վարդապետի, որ յառաջագոյն 'ի փախստեան իւրում 'ի Պարսկաստան, ըմբռնեցաւ 'ի ճանապարհի և եդաւ 'ի բանտի, և բարձեալ 'ի նմանէ պատիւ Պատրիարքութեան Կոստանդինուպօլսոյ։ Բայց Երուսաղէմայն մնացեալ 'ի վերայ նորա, չարչարեաց զաղքատս, և դատապարտեաց զնոսա 'ի տուժս և 'ի տուդանս եւ ըստ ցանկութեան սրտի իւրոյ՝ եկեր եւ վատնեաց զինչս և զստացուածս եկեղեցեաց և վանօրէից, որոյ վասն դատապարտեցաւ նա 'ի պատիժ պատուհասի։

Իմացեալ զայսոսիկ Արքայի, հրամայեաց բաժանել ըզ-Պատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի Կոստանդինուպօլսոյ. և մի եւս համարձակիլ ումեք միաւորել զայն։ Յովհաննէս վարդապետ կացեալ անդ յԱդրիանուպօլիս, էառ զերկուս հրովարտակս. զմին վասն իւրոյ Պատրիարքութեան ՌՃԻԹ (1717), և զմիւսն վասն Պատրիարքութեան Գրիգորի վարդապետի 'ի վերայ Երուսաղէմի ՌՃՄ (1718), և դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս։

Բայց զհրովարտակն Պատրիարքութեան Երուսաղէմի, որ մինչեւ ցայն վայր փոփոխեալ և այլայլեալ էին Տեղակալք 'ի չփոթութեան իւրեանց, եւ յղկել և նորոգել և գրեթէ վերստին ձուլել զայն. գրեալ 'ի նմա ուրոյն ուրոյն իշխանութիւն Պատրիարքին, և բովանդակ իրաւունք և սեփականութիւնք ազգին, ըստ մտաց առաջին հրովարտակաց. և այս գործ տեւեաց բովանդակ ամ մի և ամիսս ութ։ Եւ 'ի դարձին իւրում 'ի Կոստանդինուպօլիս, արար ժողով մեծ յեկեղեցւոջ Ս. Աստուածածնի, եւ եւ գրել նոցա թուղթ աղաչանաց յէջմիածին առ Աստուածատուր Կաթուղիկոս Համատանցի, զի հրամանաւ իւրով ստիպեսցէ զՊրիգոր եպիսկոպոս, զառաջնորդն Ս. Կարապետի գալ 'ի Կոստանդինուպօլիս վասն Պատրիարքութեան Երուսաղէմի, քանզի կասկածէին՝ թէ նա ոչ առնու յանձն գալ անդր. գրեցին առ նա և ինքեանք եւ աղաչեցին, զի մի յապաղեսցէ գալ, եւ առաքեցին զարս երեւելիս հրաւիրել զնա։

Հաճեալ յոյժ ընդ այս Կաթուղիկոսին, գրեաց առ Գրիգոր եպիսկոպոս, եւ հարկեցուցիչ հրամանաւ բռնադատեաց զնա յանձն առնուլ զայն իշխանութիւն յօգուտ աղ-